

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄՍԻԱՅ ՔՐՕՆԻԿ

Կովկասը, ամբողջ Կովկասը պատրաստուած է իւր արդիւնաբերական հանճարով փալել Թիֆլիսի Արդիւնաբերական և Գիւղատնտեսական հանդէսի դաշտում: «Մուրճ»-ը, իւր առաջին իսկ համարից, պարտք համարեց յորդոր կարդալ տեղական ազգաբնակութեան՝ սիրով ընդունել Արդիւնահանդէսի մասնաժողովի հրաւերքը՝ հանդէսին մասնակցելու: Աւելի մեծ պրօպագանդի համար, մեր ամսագիրը, մի քանի համարում շարունակ հրատարակեց Արդիւնահանդէսի ծրագիրը և մասնակցելու պալմանները, դեռ աւելի էլ վաղ, քան փշեալ մասնաժողովը հրատարակել էր պաշտօնական կերպով:

Աճապարելու պատճառ ունէինք մենք: Այդ մասնաժողովը, որի հոգսը պէտք է լինէր տեղական բոլոր բազմակեզու ազգաբնակութեան ծանօթացնել ծրագրի հետ, յորդորներ կարդալ, զօրեղ պրօպագանդ անել, մի խօսքով, տաքացնել ժողովուրդը, արդիւնաբեր ժողովուրդը առաջադրած մեծ գործի համար, այդ մասնաժողովը իւր, ալսպէս ասած, չափաւարական գործը կատարած համարեց, տպագրելով ծրագիրը և կանոնները, ուսուներէն լեզուով, ալսինքն ալս լեզուով, որը ամենից քիչն են հասկանում երկրիս արդիւնաբեր ազգաբնակութեան ամենամեծ մասը: Միւս լեզուներին համար մասնաժողովը բարեհաճել էր չատկացնել մի որոշ գումար, որպէս զի Թարգմանութիւն տպողը ներկայացնէ մասնաժողովին ալսքան ու ալսքան օրինակ և ստանալ ամեն մի օրինակի համար ալսքան ու ալսքան կոպէկ: Եւ դեռ ալս որոշումն էլ արել էր մասնաժողովը իւր մէջ, առանց չափաւարելու: Եւ ահա թէ ինչպէս կարող էր պատահել, որ երկրիս հաւկական ազգաբնակութիւնը, ալսինքն երկի թէ երկրիս ամենաարդիւնաբեր և ամենավաճառաշահ ազգաբնակութիւնը, չ'ունեցաւ ծրագրի և կանոնների հաւերէն Թարգմանութիւնը առանձին հրատարակութեամբ՝ մասնաժողովից մատակարարած: Ուրեմն կարգադրիչ մասնաժողովը չի կարելի ասել՝ թէ մի առանձին և մինչև իսկ սովորական հաճելութիւն ցուց

տւած լինէր և նոյն իսկ հասարակ քաղաքավարութիւն բանեցրած լինէր հալ արդիւնաբերողների վերաբերութեամբ: Այդ հանգամանքը, որքան էլ չնչին երևալ կամ չնչին ուղեման երեացնել, արժանաւորութիւն ունի վկայելու կարգադրիչ մասնաժողովի ձեռնհասութեան աստիճանը մի արդիւնահանդէս սարքելու գործում:

Բայց այս հանգամանքը ես չը վշտակեցի նորա համար, որ իբր թէ ես գուշակում եմ նորաբայ Արդիւնահանդէսի անլաջողութիւնը: Ամենին ոչ: Ես բոլորովին լոյս ունիմ, որ բոլոր ացեւունները պէտք է վկայեն, որ ներկալ թւականի Կովկասեան Արդիւնահանդէսը դեռ աւելի էլ բան է ներկայացնում, քան ինչ կարելի էր սպասել: Մենք լաւ առիթ կ'ունենանք աչքով տեսնելու Կովկասեան քաջ ժողովուրդների քրտինքով վաստակածը աւհասարակ և մի պատական առիթ՝ տեսնելու հալ ժողովուրդի արդիւնաբերական հանճարը—համեմատաբար ալլազգիների հետ:

Օգոստոսի 1-ից, Անդրկովկասեան երկաթուղին, այդ երկաթուղու ընկերութեան ձեռքից անցաւ տէրութեան ձեռքը: Պետական դանձարանը գնեց ընկերութիւնից երկաթուղին: Ըստ երևութին, հասարակութեանը ինչ, թէ երկաթուղին ունի է պատկանում՝ կապիտալիստների մի ընկերութեան, թէ պետական դանձարանին: Սրկու դէպքերում էլ շոգեքարը գնալ-գալու է և նոյն պաշտօններն է կատարելու, ինչ որ մինչ ալժամ նա կատարել է: Բայց իրապէս, երկաթուղիների ում ձեռքում լինելու խնդիրը մի մեծ խնդիր է: Եւ նա մի շատ մեծ տեղ է բռնում բոլոր լուսաւորած երկիրների մամուլի մէջ, այն մամուլի, որը կոչած է հասարակաց շահերը պաշտպանելու: Որպէս շատ ուրիշ խնդիրներ, նաև երկաթուղալին գործը ունի չատուկ գրականութիւն և այն էլ շատ ընդարձակ գրականութիւն: Ես չեմ խօսում երկաթուղի չինելու արհեստի մասին, որը տեխնիկի գործ է. ես խօսում եմ խնդրի հասարակական նշանակութեան մասին, որի շնորհիւ նա տէրութիւնների ներքին քաղաքականութեան խնդիրներից մէկն է կազմում և, որպէս այդպիսին, պետական գիտութիւնների, քաղաքականութեան և քաղաքա-տնտեսութեան գիտութիւնների առարկաներից մէկն է:

Երկաթուղիներ չինում է և կառավարում կամ ինքը տէրութիւնը և կամ մասնաւոր անձերի մի ընկերութիւն: Այս վերջին դէպքում, ընկերութիւնը կամ վերցնում է բոլոր ֆինանսական պատասխանատւութիւնը իւր վերաջ և կամ պայմանաւորում է տէրութեան հետ, որ սա երաշխաւորէ ընկերութեանը մինչ մի որոշ սահմանի զուտ արդիւնքը, գործադրած դրամազխի որոշ տոկոսը, օրինակ՝ 5 կամ 6 տոկոսը:

Անգլիալում, որը ի բնէ մասնաւոր ձեռնարկութիւնների հայրենիքն է:

է, երկաթուղիները մասնաւոր ընկերութիւններէ ձեռքումն են. ֆրանսիական երկաթուղիներէ ամենակարեւոր և մեծ գծերը շինել են և կառավարում են նմանապէս մասնաւոր ընկերութիւններէ ձեռքով, բայց տէրութեան երաշխատրութիւնով. Գերմանիայում, լատիապէս Պրուսիայում, երկաթուղային գործը եղել է և է գլխաւորապէս տէրութեան գործ և ոչ մասնաւոր ընկերութիւններէ, կապիտալիստներէ. Ռուսիայում երկաթուղիները մեծ մասով մասնաւոր ընկերութիւններն են կառուցել՝ տէրութեան երաշխատրութիւնով:

Գարուս ալն թափանցեալում, երբ կապիտալը նոր-նոր սկսեց ուժ ստանալ և երբ նա հասցրեց իւր ուժը մինչ ալն աստիճանի, որի առջև կառավարութիւնները գլուխ էին խոնարհում, ալք թափանցեալում երկաթուղային վերին աստիճանի արդիւնաւէտ գործը դժւար էր կորզել կապիտալիստ դասակարգի, բուրժուազիայի ձեռքից: Որովհետև կապիտալը հրաշքներ էր գործում և բոլոր լուսատուած երկիրները իրանց կերպարանքը հիմնովին փոխեցին նոր ծնունդ առած ինդուստրիալիզմով, ալք երկիրներում նաև քաղաքական ուժը կենդրոնացաւ ալն դասակարգի ձեռքում, որը իւր ձեռքումն ունէր ինդուստրիան կամ գործարանականութիւնը: Նրբ զանազան երկիրներ, մէկը միւսի չետեից, ստացան սահմանադրութիւններ, ամեն բան պէտք է բղխէր ազգից ընտրած պատգամաւորների ժողովից և կամ անցնէր սորա միջով՝ ինչ խօսք, որ նաև երկրի օրէնսդրութիւնը ընկաւ ուժեղ կապիտալիստ դասակարգի ձեռքը: Երկաթուղային գործը, որը պահանջում էր ոչ միայն միլիոններ, այլ և միլիարդներ՝ ընկաւ կապիտալիստների ձեռքը: Տէրութիւնները պահպանեցին իրանց բարձրագոյն իրաւունքները՝ հսկողութիւն անելու, տակսաններ նշանակելու. որոշ պալմաններով և ալն, բայց ստիպեցին, որքան հնարաւոր է, զիջանել կապիտալիստ ընկերութիւններին օգտին:

Իրողութեան և պատմական անհրաժեշտութեան ծանրութիւնը զգացին նաև ալն զիտութիւնները, որոնց սփերի մէջ մտնում է երկաթուղային խնդիրը: Հազար ու մէկ արգումներներ բերին չօգուտ ալն թե զի սի, թէ ալք գործը աւելի ձեռնտու է և աւելի լաւ է տալ մասնաւոր մարդկանց ձեռքը՝ իբր թէ դոքա աւելի լաւ են շինում ամեն բան, քան ինքը տէրութիւնը:

Մասնաւոր ընկերութիւնները, մինչ վերջին տասնեակ տարին, դեռ ամենակարող էին: Բայց երբ երկաթուղային գծերի ամենակարեւոր մասերը շինւած վերջացած էին, տէրութիւնները օգուտ քաղեցին՝ իրանց իրաւունքները աւելի զօրեղ կերպով բանացնելու, տէրութիւնների միջամտութիւնը աւելի շօշափելի կերպարանք ստացաւ: Ընկերութիւնները իրանց զգացին կապւած երկու ձեռքերով և ալնքան ընդդիմադրութիւն չը կարողացան գործ դնել, որպէս առաջ: Տէրութիւնը սկսեց միջամտել տակսանները իջեցնելու համար. նա նշանակեց երթևեկների վերալ հարկեր և ալն և, որ գլխա-

տրն է, ընկերութիւնների հաշիւների վերալ աւելի մեծ հսկողութիւն մտցրեց. չէ որ տէրութիւնն էր պատասխանատու որոշ զուտ արդիւնքի համար:

Այս բոլորը բնականապէս դժարացրեց մասնաւոր ընկերութիւնների գործը. իսկ միւս կողմից ան դադափարը, թէ տէրութիւնը ինքը կարող է երկաթուղալին գծերը թէ շինել և թէ կառավարել,—աւելի ու աւելի լաղթող հանդիսացաւ. Թէօրիալից աւելի ուժեղ կերպով ազդէ՞ օրինակը և ալք օրինակը տւեց մանաւանդ Պրուսիան, ուր երկաթուղիները մեծ մասով տէրութեան ձեռքով և՛ շինւած են և՛ կառավարուած են. Բայց նոքա շինւած են ու կառավարուած են ամեն կողմից օրինակելի կերպով. Այն ժամանակից, երբ մանաւանդ իշխան Բիսմարկը մտցրեց՝ ալսպէս կոչւած՝ «պետական սօցիալիզմը» երկրի ներքին քաղաքականութեան մէջ և ստիպեց միւս տէրութիւններին էլ հետեւել իւր տւած օրինակին, ջախջախելով արդէն փտութեան հասնող բուրժուազական պօլիտիկը, որի ներկայացուցիչներն են ալսպէս կոչւած «ազատամիտ կուսակցութիւնը»—ալք ժամանակից ի վեր նաև երկաթուղալին գործում պրուսական երկաթուղալին քաղաքականութիւնը տարածեց. Սերոպալում: Ռուսիան ան եւրոպական երկիրներինցն է, ուր ոչ մի կուսակցութիւն դեռ ևս խոր արմատներ չ'ունի պատմութեան մէջ. Սե ալք է պատճառը, որ ամեն մի նորութիւն և նոր վարդապետութիւն, որ քարոզւում է մնացեալ Սերոպալում, շուտով և շատ շուտով ընդունւում է Ռուսիայում: Բիսմարկի պետական սօցիալիզմը, օրինակ, օրէնքները բանւորների վերաբերեալ՝ դժբաղդութիւնների դէպքում, բանւոր ինւալիդների վերաբերեալ և ալլն աւելի մեծ շանս ունեցաւ արձագանք գտնելու ռուսաց օրէնսդրութեան մէջ, քան, օրինակ, Ֆրանսիայում: Նոյնը կարելի է ասել երկաթուղիների մասին: Տէրութիւնը աշխատում է ալթմ նորերը շինել իւր հաշւով. գեներալ Աննենկովը, շինելով Անդրկովկասեան երկաթուղին, մեծապէս նպաստեց լօգուտ տէրունական երկաթուղիներին, Տէրութիւնը առնելով Անդրկովկասեան երկաթուղին, առաջնորդւում է նոյն գաղափարով:

Մեր երկրում ինքնաօգնութեան ամեն մի դէպքը հասարակական ինքնաճանաչութեան նշան է. Թիֆլիս քաղաքի ինքնավարութեան նախաձեռնութեամբ, այս վերջին ամիսներս կազմեց կրակից ապահովող մի փոխադարձ ընկերութիւն: Մինչ ալթմ Թիֆլիսում և ուրիշ քաղաքներում, որտեղ սովորութիւն է մտել տները ապահովել կրակից, բոլորը ապահոված էին Ռուսիայի ընկերութիւնների մօտ, որոնք գլխաւորապէս Թիֆլիսում ունին իրանց ագենտուրները: Տան արժէքի ամեն մի 1000 ռուբլուն տալով 6—7—8 ռուբլի ապահովութեան համար, տարեկան ահագին

գումարներ էին դուրս գնում մեր երկրի շրջանառութիւնից և մտնում մեր երկրի ինտերեսներից հեռու կանգնած մարդկանց գրպանները: Մեր տեղացիների մտքովն էլ չէր անցնում տեղացիներից ընկերութիւններ կազմել՝ օտարներին հարկ տալու անհրաժեշտութիւնից ազատելու համար: Գործից հեռու կանգնելուն նպաստում էր ալն հանգամանքը, որ կրակից ապահուող ընկերութիւնները մեծաքանակ միլլիոններ ունին որպէս զրամազուլիս: Մի՞թէ մեր խելքի և գրպանի գործն է, մտածում էին մերոնք, 5—10—20 միլլիոններով զրամազուլիս կազմել՝ մի ալդպիսի ընկերութիւն գլուխ բերելու համար:

Թիֆլիսի քաղաքային վարչութեան անդամներից մի քանիսը դեռ աւելի էլ խելօք բան առաջարկեցին, քան կազմել տեղական կապիտալիստներից մի ընկերութիւն: Նոքա առաջարկեցին, որ, նախաձեռնութեամբ քաղաքային վարչութեան, կազմել փոխադարձ ապահովութեան մի ընկերութիւն, որի կապիտալը կազմէր ապահովութեան համար տուած փողերից: Ենթադրենք, թէ Թիֆլիսի տները ներկայացնում են հարիւր միլլիոն ռուբլու արժէք: Ապահովութեան համար եթէ 1000 ռուբլուն տան դիցուք 6 ռուբլի, ընկերութիւնը կ'ունենալ տարեկան 600.000 ռուբլի զրամազուլիս: Եթէ Թիֆլիսում ալուած տները տարեկան ներկայացնեն 600.000 ռուբլու արժէք, կը նշանակէ թէ ընկերութեան զրամազուլիսը բաւական է իրանց տները ապահովացրած տանտէրերին բաւականութիւն տալու համար:

Իսկ եթէ, ասում էին փոխադարձ ընկերութեան հակառակորդները, ալուած տների արժէքը աւելի լինի, քան ընկերութեան ալդ համեմատապէս չնչին զրամազուլիսը, ալն ժամանակ ով պիտի վճարէ ֆնասը: Դորա պատասխանը սա է, որ ալն, ինչ վեր կը լինի ընկերութեան կարողութիւնից, ալդ կը վճարէ մի որ և իցէ ուրիշ, աւելի հարուստ ընկերութիւն, որի հետ Թիֆլիսի ընկերութիւնը նպատակալարմար պայման կը կապէ: Բանը սա է, որ նոյն իսկ Մօսկւայի Պետերբուրգի ընկերութիւնները, որոնց զրամազուլիսները գործին անտեղեակների աչքերը չլացնում են, ալնքան հարուստ չեն, որ կարողանան, դժբաղդ դէպքում, իրանց վերայ առած պարտաւորութիւնները կատարել: Նոցանից ապահովացրած տների արժէքը անհամեմատ աւելի մեծ է, քան նոցա զրամազուլիսը: Ալդ զրամազուլիսը հազիւ հազ հասնում է ապահովացրած տների արժէքի չնչին տոկոսին: Ալդ պատճառով, նոյն իսկ հարուստ համարւած ռուս ընկերութիւնները ստիպւած են իրանց մօտ ապահովացրած տները կրկին ապահովացնել մի որ և է աւելի հարուստ և աւելի հաստատ արտասահմանեան ընկերութեան մօտ, որին վճարում են մի որոշ տոկոս իրանց ստացած ապահովական պրեմիաներից: Ուրեմն, մտածեցին Թիֆլիսի փոխադարձ ապահովութեան ընկերութեան ինիցիատորները, եթէ նոյն իսկ ռուսաց մալաքաղաքների մեծ կապիտալիստական ընկերութիւնները հարկ

են տեսնում մի որոշ հարկ վճարել արտասահմանեան ընկերութիւններին, ինչո՞ւ Թիֆլիսի փոխադարձ ապահովացման ընկերութիւնը չի կարող դիմել մի ուրիշ, իրանից աւելի հարուստ, ընկերութեան, լինի ալ ընկերութիւնը մի ռուսական թէ մի արտասահմանեան ընկերութիւն:

Բայց սա էլ մի մեծ խնդիր է, թէ արդեօք նախատեսնում է, որ Թիֆլիսի ընկերութիւնը միանգամայն անհրաժեշտ կերպով պարտաւորւած է մի ուրիշ ընկերութեան օգնութեան դիմել թէ ոչ:

Ստատիստիկապէս հաստատւած է, որ Թիֆլիս քաղաքի ալրւած տները արժէքը շատ աւելի սպակաս է, քան ունի գումարը, որ վճարած են Թիֆլիսի տանտէրերը ապահովացման ընկերութիւններին:

Ուրեմն, եթէ Թիֆլիսի բոլոր տները ապահովեն փոխադարձաբար, պէտք է որ գոյացած գումարը շատ գերազանցէ Թիֆլիսում ալրւելիք տները արժէքին:

Այս գաղափարը, սակայն, փոխադարձաբար իրար տները ապահովել՝ Թիֆլիսում չէ ծնւել. Ռուսաստանի շատ քաղաքներում նա արդէն գործադրւել է: Կապիտալիստական մեծ ընկերութիւնները, ալ չնորութեան մէջ իրանց գոյութեան համար վտանգ նշմարելով, խօսք կապեցին թըշնամաբար վարւել փոխադարձ ապահովացման ընկերութիւնների դէմ: Նոքա վճուցին չ'ընդունել փոխադարձ ապահովացման ընկերութիւնների առաջարկութիւնը՝ վերաապահովացնել նոցա մօտ քաղաքային տները: Բայց նրանց չը լաջողեց արդելք լինել համակրելի և առողջ գաղափարի իրագործման. փոխադարձ ընկերութիւնները վճուցին չը դիմել մեծ ընկերութիւններին և սոքա, տեսնելով մօտալուտ մեծ վտանգը, լսող իրանք սկսեցին գրեթէ աղաչել, որ իրանց մօտ վերաապահովացնեն: Յօսա ունենանք, որ Թիֆլիսի տանտէրերը իրանց հասարակաց օգուտը կը հասկանան և դորանով մեր միւս քաղաքներին լաւ օրինակ տւած կը լինին: Եւ մեր ալ միւս քաղաքները կը շտապեն օգտւել տւած օրինակից: Յուսով ենք: Թերեւս «Մուրճ»-ը ալ խնդրով մօտ ապագայում աւելի լուրջ կերպով զբաղւի, նւիրելով ալ խնդրին մի առանձին խօսած, որի մէջ դուրս բերւած կը լինին խնդրին վերաբերելի թէ թւանշանները և թէ կանոնները:

Ներկայ տարւալ ամառը Անդրկովկասը երեք Նշանաւոր հիւրեր ունեցաւ. մի Թագաւոր, մի բանաստեղծ, մի քաղաքական թղթակից՝ Նասրէդդին Շահը, Ռաֆայէլ Պատկանեանը, Ֆից-Ջերալդը—թղթակիցը անգլիական ազատամիտ կուսակցութեան գլխաւոր օրդան «Իշլի-Նիւտ»-ի: Այդ երեք ճանապարհորդների ներկայութիւնը մեր երկրում թողեց լաւ տպաւորութիւն մեր ժողովուրդի վերայ: Նասրէդդին Շահին ամեն տեղ ուղեկցում էին ոչ միայն նորա հպատակների, այլ դրականապէս բոլոր ազգութիւնների բարի ցանկութիւնները և սրտանց ողջոյնները: Այս երրորդ ան-

գամն է, որ պարսից թագաւորը ոտք է դնում իւր երկրից դուրս: Անկասկած է, որ ամեն անգամ նա իւր հետ տարել է Եւրոպայից մի որ և իցէ նոր դիտաւորութիւն, մի գաղափար, մի զգացմունք: Այն ընդունելութիւնները, որ Շահը դտաւ թէ Ռուսիայի և թէ Արտասահմանի մալաքադաքներում, վրաւի նշանաւոր էին: Հերթով ամենալեւջին ընդունելութիւնը՝ հակականն էր, Վահափառ Կաթուղիկոսի մօտ, Էջմիածնում, որ ներկայ Շահը երկրորդ անգամն է ակցելում:

Ռաֆայէլ Պատկանեանը ալս անգամ, պէտք է ասած, շատ աւելի նւազ նկատելի եղաւ, դոնէ թիֆլիսում, քան 1887 թւականին: Բայց բանաստեղծի մեղ մօտ երեսը թէ ալն և թէ ալս անգամ երևոյթ էր՝ իւր նշանակութիւնով սովորականից դուրս: Նորա անունը, կից նորա վերին աստիճանի արտապատիչ դէմքի գծագրութիւնների և առհասարակ արտաքինի հետ, զօրեղ տպաւորութիւն են գործում մանաւանդ հասարակաց տեղերում: Այն երեկոն, երբ նա թիֆլիսի ժողովարանումն էր, կարելի էր ամենալն իրաւամբ Պատկանեանի երեկոյ անուանել. նա անում էր ընդհանուրի վերալ մի մեծ հիւրի ապաւորութիւնը: Պատկանեանը ամեն անգամ, երբ մեղ մօտ է գալիս, Էջմիածնի ուխտաւոր է: Նա երբէք ոչ դատարկ գնում է և ոչ դատարկ դուրս գալիս: Անցեալ 1887-ին նա այնտեղի թանգարանին տարաւ նւիրեց, կարծեմ, իւր մի ալբոմը, չօքէլեանին ստացած, իսկ ալս անգամ իմացեց, որ Վահափառից հաճութիւն է ստացել ստորագրութիւն բանալու, որ աղղովին մի նոր սան (մեռօն եփիլու կաթսալ) պարգևի Էջմիածնին:

Իսկ ինչ վերաբերում է մեր անգլիական հիւր Ֆից-Ջերալդին, չաւտնի է թէ ինչ պատմական նշանակութիւն ստացան նորա մերկացումները Բօլզարիայում կատարած տաճկական բարբարոսութիւնների 1877 թւականին անգլիական «Իէլլի-Նիւս» թերթի էջերում: Ֆից-Ջերալդը ալս անգամ, ուրեմն առաջինից 13 տարի չետոյ, գնաց ոչ թէ Բօլզարիա, ալ Տաճկա-Հալաստան: Նա վերադարձաւ Ալէքսանդրօպօլի և թիֆլիսի միջով, Կ. Պօլս գնալու համար, ուր նա պէտք է սպասէ Մուսա-բէլի և ընկերութեան գործի վախճանին:

ԼՈՒՍԻՆԻ